

մեր թագեալ՝ թէ ժողովուրդն ցրուի. եւ յետ պահու ինչ ելեալ ի պաղչաէն եւ գնայր գլխիբաց, քանզի կորուսեալ էր զփակեղն եւ թոեալ էր ի մէջ բազմամբօսին, եւ մեր տեսեալ զնա՝ ձայնեցաք բռնութեամբ, զխաթրն եւ զբարկութիւնն շիջուցաք. ապա ի գիշերիս յայսմ ի հետ չար կարագետ երիցուն է նստեալ մինչ ի կէս գիշեր, վասն այսորիկ զայս չարութիւնս արար: Եւ յետ պահու միոյ մի եպիսկոպոս բերին, զի էր ի Սըսոյ եկեալ յէրէկ, եւ զսա բերին զի դատաստան առնիցէ: Եւ յայսմ պահու եկեալ Թէրզին Գրիգոր եւ նստեալ անդ եւ ասացեալ թէ վասն է՞ր զիս ծեծել տվին կիրակի օր, որ ես գնացի Եզրիազար վարդապետին Մեղա՛յ ասի, եւ տվի զհուճէթն, վասն է՞ր ելեալ Մարտիրոս վարդապետն ծանուցում արաւ՝ թէ այսպէս այնպէս, եւ զիս այսպէս արարին: Եւ մերալինքս պատասխանի տվեալ թէ Ուրբաթ օրս որ ժողովեցանք ի տեղս եւ դատաստան եղև եւ Զ եկեղեցոյ իշխանքն զայն ասացին թէ Զայս բանքս զրեմք եւ առ կաթողիկոսն ուղարկեմք ծանուցանել զգործս սորա. եւ Դ եկեղեցին մօհրեցին եւ ուղարկեցանք ի Սուրբ Գէորք զի մօհրեսցին, եւ եկեալ զնացողն եւ երեր զթուղթն Մարտիրոս վարդապետին թէ Զմօհրեցին ի ժամանակ ժամուն. եւ նա լցեալ բարկութեամբ ել թէ Ծանուցանեմ. եւ յիշեալ զչար կարագետն՝ մինն դայ է, եւ դու ելեալ ես՝ ի՞նչ կ'ուզէք ի նորանէ, եւ նա փախել է եւ զքեզ առել են ի ձեռ, քանզի լեզուաւքո անկեալ ես ի փորձութիւն: Եւ նա ասացեալ թէ Թո՛ղ դայ Աստուածատուր վարդապետն եւ դատաստան առնել տամ վասն իւր աշակերտին թէ Զիս ծեծել ետուր. եւ մեր ասացեալ թէ Բարի: Եւ յետոյ զնացին նստան ամենեքեան ի մեծ օտան եւ նստաւ Խաչատուր պարոնտէրն եւ նստան քահանայք եւ աթոռակալք եւ իշխանք զասս զասս եւ մեր կանգնեալ առաջի եւ որ